

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## «ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՄԿԶՔՈՒՆՔԸ» ԵՎ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՀՆՉՈՒՑԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

### ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տարածամանակյա հնչույթաբանության (այսուհետև ՏՀ)<sup>1</sup> որպես հնչաբանական գիտակարգի ձևավորման առումով մեծ է եղել նախորդ դարի առաջին կեսի ֆրանսիացի ճանաչված լեզվաբան Ա. Մարտինեի «Խնայողության սկզբունքը հնչյունական փոփոխություններում» (այսուհետև՝ «Խնայողության սկզբունքը») աշխատության նշանակությունը<sup>1</sup>: Այս գիրքը, անշուշտ, ոչ միայն ՏՀ-ի հիմնարար ուսումնասիրություններից է, այլև կարող է համարվել 20-րդ դարի տեսական լեզվաբանության կարևոր ձեռքբերումներից մեկը: Իհարկե, հնչույթաբանական տարածամանակյա դիտարկումներ տեղ էին գտել նաև ուրիշների կողմից ավելի վաղ հրատարակված աշխատություններում (Հ. Սյուրիտ, Օ. Եսպերսեն, Պ. Պասի, Մ. Գրամոն, Կ. Լյուիկ, Ա. Վ. դը Գրոտոս և այլք), երբ ոչ միայն տարբերակված չէր ՏՀ-ն, այլև առհասարակ հնչյունաբանությունից առանձնացված չէր հնչույթաբանությունը որպես ուսումնասիրության սեփական օբյեկտն ունեցող գիտակարգ: Ըստ էության ՏՀ-ի սկզբնավորումն էին նախանշում Ե. Պոլիվանովի և Ռ. Յակոբսոնի պատմահնչույթաբանական ուսումնասիրությունները, որոնք լույս տեսան 20-րդ դարի 30-ական թվականներին<sup>2</sup>: Թեպետև ՏՀ-ի հարցերի քննություն էր նաև չէի լեզվաբան Ն. վան Վեյկի «Հնչույթաբանության» երկրորդ մասը<sup>3</sup>, որը լույս էր տեսել «Խնայողության սկզբունքից...» 16 տարի շուտ, բայց և այնպես Ա. Մարտինեի գրքի ծնունդը որակապես նոր փուլ էր կանխորոշում ՏՀ-ի կայացման ճանապարհին<sup>4</sup>: Այդ մասին

<sup>1</sup> Այս գիրքը առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերենով 1955 թ. (**André Martinet**, *Économie des changements phonétiques (traité de phonologie diachronique)*, Berne, 1955): Ռուսերեն թարգմանությունը, որից օգտվում ենք մենք, ներառում է աշխատության միայն առաջին մասը (տե՛ս **Мартинет А.** *Принцип экономии в фонетических изменениях (проблемы диахронической фонологии)*. М., 1960):

<sup>2</sup> Տե՛ս **Поливанов Е. Д.** *Статьи по общему языкознанию*. М., 1968, էջ 55-134, **Якобсон Р.** *Принципы исторической фонологии // Избранные труды*. М., 1985, էջ 116-132:

<sup>3</sup> Այս աշխատությունը, որ լույս է տեսել Ն. Ս. Տրուբեցկոյի «Հնչույթաբանության հիմունքներից» մեկ տարի անց 1939 թ., անշուշտ Պրահայի հնչույթաբանական ինստիտուտի արժեքավոր նվաճումներից է, սակայն լայն ճանաչում չի ունեցել աշխատության լեզվի (չեխերեն) դժվարամատչելիության պատճառով (տե՛ս **Журавлев В. К.** *Диахроническая фонология*. М., 1986, էջ 59):

<sup>4</sup> Հմտ. նաև «... Ֆրանսիացի լեզվաբան Ա. Մարտինեին է պատկանում դիախրոնիկ հնչույթաբանության ստեղծման առաջին լուրջ փորձը» (**Գ. Բ. Ջահուկյան**, *Լեզվաբանության պատմություն*, II հատոր., Եր., 2015, էջ 363):

են վկայում այն բուռն արձագանքները, որ ունեցել է այդ գիրքը հրապարակումից հետո<sup>5</sup>:

Չնայած Ա. Մարտինեի գրքի անվանումին՝ «Խնայողության սկզբունքը ...», իրականում այնտեղ քննության նյութ է դարձել հիմնահարցերի զգալիորեն ավելի լայն շրջանակ, որը միտված է ոչ միայն համակողմանիորեն բացահայտելու «խնայողության սկզբունքի» էությունը, այլև առհասարակ ներկայացնելու հեղինակի լեզվաբանական, մասնավորապես հնչույթաբանական հավատամքը:

Լեզվական, հատկապես հնչույթային կազմի խնայողությունը կազմախոսական ապարատի աշխատանքի արդյունք է, սակայն բուն խնայողությունը լեզվի կառուցվածքային և համակարգային իրողություններով պայմանավորված բարդ գործընթաց է, որի ժամանակ միայնակ հակադրվում և համադրվում են մի շարք գործոններ: Խնայողության էությունը (Ջ. Յիպֆի բանաձևումով՝ «նվազագույն ճիգի» օրենքը), ըստ Ա. Մարտինեի, պայմանավորված է մի կողմից «խոսքի օրգանների բնորոշ իներցիայի», մյուս կողմից՝ հաղորդակցման պահանջի բախումով<sup>6</sup>: Այդ առնչությամբ Ա. Մարտինեն գրում է. ««Խնայողություն» տերմինը ներառում է ամեն ինչ՝ և ոչ օգտակար տարբերությունների չեզոքացումը, և նոր տարբերությունների ի հայտ գալը, և գոյություն ունեցող դրության պահպանումը: Լեզվական խնայողությունը գործող ուժերի համադրություն է»<sup>7</sup>: Իսկ այդ գործող ուժերը լեզվի համակարգով և կառուցվածքով պայմանավորված իրողություններ են: Որպես այդպիսիք՝ Ա. Մարտինեի հնչույթաբանական հարացույցում կարևորվում են *համակարգային ճնշման, հնչույթների կարգերի, շարքերի, լծորդությունների և փնջերի, ներդաշնակության և կայունության* երկվայթները: «Գործող ուժերի» այսպիսի կազմի ընտրությունն առանձին լեզվաբանների հիմք է տվել ասելու, որ Ա. Մարտինեի խնայողության տեսության մեջ իրողությունները դիտարկվում են միայն հարացուցային պլանում, այն է՝ համակարգի տեսանկյունից, և որ այնտեղ անտեսված է շարակարգը, այսինքն՝ խոսքային հոսքնթացը, որում տեղի են ունենում այդ գործընթացները: Մասնավորապես, Վ. Զվեգինցևը, ընդունելով, որ «... ելակետային տեսական դրույթների, սկզբունքների և հասկացությունների հստակ ձևակերպումը Ա. Մարտինեի գրքի ուժեղ կողմն է»<sup>8</sup>, այնուամենայնիվ հակված է կարծելու, որ «... հնչույթները հեղինակը դիտում է միայն «համակարգում» (կամ, ինչպես ընդունված է ասել, հարացուցային պլանում), այլ ոչ թե «խոսքային հոսքնթացում», «հաջորդականության մեջ» (կամ շարակարգային պլանում)»<sup>9</sup>: Իհարկե

<sup>5</sup> Տե՛ս **Журавлев В. К.**, նշվ. աշխ., էջ 60, **Звегинцев В.** Структуральная лингвистика и теория экономики А. Мартине // **Мартине А.**, նշվ. աշխ., էջ 5, ծխթղ. 1:

<sup>6</sup> Տե՛ս **Мартине А.**, նշվ. աշխ., էջ 128-130:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>8</sup> **Звегинцев В.** Структуральная лингвистика... // **Мартине А.**, նշվ. աշխ., էջ 13:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 21, տե՛ս նաև **Журавлев В. К.**, նշվ. աշխ., էջ 60:

Ճիշտ չի լինի ասել, թե այդպիսի գնահատականն ընդհանրապես հիմքեր չունի, բայց այն փոքր-ինչ ծայրահեղացված է: Դրա համար հիմք է եղել թերևս այն, որ հիմնական «գործող ուժերը», որոնց փոխներգործությամբ «խնայողության տեսության» հեղինակը պայմանավորում է հնչյունական փոփոխությունները (այլ կերպ՝ «խնայողության սկզբունքի» իրացումը), պատկանում են համակարգին: Դրանք *ճնշումը, հնչույթային կարգերը, շարքերը, լծորդությունները* և *փնջերն* են, որոնք վերաբերում են հարացույցին: Բայց չէ՛ որ այդ «ուժերի» «աշխատանքը» կամ առնվազն՝ նրա արդյունքները դրսևորվում են խոսքային հոսընթացում (իմա՝ շարակարգում), որի ուղղակի և անուղղակի անդրադարձները կան նաև Մարտինեի ձևակերպումներում (հմմտ. «... խոսքային հոսընթացի յուրաքանչյուր կետում համակարգը ցույց է տալիս որոշակի ճնշում՝ ուղղված, որպես կանոն, սովորական արտաբերության պահպանմանը և **հակադրված խոսքային հոսընթացում հարևան հնչույթների կողմից «կողային» ճնշմանը**»<sup>10</sup>, «...խոսքային հոսընթացում ամեն հնչույթի իրացումը երանգավորվում է տարբեր կերպ՝ **նախորդող կամ հաջորդող հնչույթների ազդեցությամբ**»<sup>11</sup>(ընդգծումն իմն է՝ Վ. Պ.): Եվ կամ *առնմանության* երևույթի դիտարկումը մի թե չի վերաբերում շարակարգին (հմմտ. «Հնչյունաբանական հատկանիշի տարածումը խոսքային հոսընթացի հարևան հատվածի վրա, որը չի տանում նոր հնչույթի առաջացմանը<sup>12</sup>, մի գործընթաց է, որը ավանդականորեն անվանում են առնմանություն»<sup>13</sup>): Այլ հարց է, որ, այո, հնչյունական փոփոխությունները դիտարկվել են առավելապես հարացուցային հայեցակերպում, քանի որ այդ փոփոխություններն առաջ բերող «ուժերը», ըստ Ա. Մարտինեի, պատկանում են համակարգին:

Հաստատելով, որ վերջին հաշվով «խնայողության սկզբունքն» է որոշում հնչաբանական արտաբերության գոյությունը<sup>14</sup>, Ա. Մարտինեն նկատում է, որ, չնայած խոսքի օրգաններով արտաբերելի և լսողության օրգաններով ընկալելի հնչյունական իրացումների թվի՝ գործնականում անսահմանափակ լինելուն, համակարգայնորեն տարբերակելի արտաբերությունների թիվը իրականում սահմանափակ է<sup>15</sup>: Վերջիններն էլ սովյալ լեզվի հնչույթներն են: Ինչպես նոր հնչույթների առաջացումը, այնպես էլ որոշ հնչույթների անհետացումը համակարգային իրողություններ են, որոնց պատճառները, սակայն, յուրաքանչյուր որոշակի դեպքում կարող են տարբեր լինել: Եթե նոր հնչույթի առաջացումը տարբեր ար-

<sup>10</sup> Мартине А., նշվ. աշխ., էջ 43:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 128:

<sup>12</sup> Առնմանության դեպքում հնչույթային համակարգը չի հարստանում նոր հնչույթով, բայց տեղի ունեցող փոփոխությունը հնչույթային է և ոչ թե հնչյունական (հմմտ. անձանք>անձամբ, ընդբռնել>ընթրնել>ըմբռնել, գրողել>սքողել և այլն):

<sup>13</sup> Мартине А., նշվ. աշխ., էջ 245:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 127:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 133:

տաբերությունների՝ համակարգայնորեն թույլատրելի միաժամանակյա համակցման արդյունք է<sup>16</sup>, ապա հնչույթի անհետացումը տարբերակիչ հատկանիշների փնջային հակադրությունից տվյալ հնչույթը տարբերակող հատկանիշի անհետացման հետևանք է: Ա. Մարտինեի դիտարկմամբ՝ վերջին կարգի իրողություն գրանցվել է ֆրանսերենի փարիզյան տարբերակում, որտեղ ձայնավորների լծորդությունն ըստ երկարության հատկանիշի անհետացել է և, օրինակ, «/ɛ̃/ հնչույթը fête բառում գտնվում է լծորդությունից դուրս»: Ըստ այդմ՝ «/ɛ̃/-/ɛ̃/ հակադրությունը, օրինակ, faite «արված» և fête «տոնախմբություն» բառերում, ունի բավականին ոչ էական գործառական բեռնվածություն»<sup>17</sup>:

Այս կարգի երևույթները, որոնց թիվը փոքր չէ լեզուներում, Ա. Մարտինեին հիմք են տալիս ասելու, որ փոփոխությունների ենթակա են հատկապես «լծորդային համակարգի մեջ չներառված հնչույթները»<sup>18</sup>: Մյուս կողմից՝ համակարգի մեջ հնչույթների ներգրավվածության աստիճանը պայմանավորված է հակադրող գործոնների թույլտվությամբ, որը նշանակում է, որ այսպես կոչված «դատարկ վանդակները» կարող են լրացվել միայն այն հնչույթներով, որոնք արդեն իսկ ունեն «համակարգում ներառվելու որոշակի աստիճան»<sup>19</sup>: Հակադրող գործոնների մեջ որոշիչ է հնչույթաբանական կառուցվածքի, մասնավորապես այդ կառուցվածքը և նրա գործառույթները պայմանավորող այնպիսի իրակությունների դերը, ինչպիսիք են «կարգի», «շարքի», «լծորդության», «փնջի» և «կատալիզի» հասկացությունները: **Կարգ** կազմում են միևնույն հատկանիշով բնութագրվող, սակայն արտաշնչական (էքսպիրատորական) ուղու երկարությամբ տարբեր կետերում տեղադրված բաղաձայն հնչույթները (հմմտ. p, t, k կամ b, d, g), իսկ **շարք** կազմում են արտաշնչական ուղու միևնույն կետում արտաբերվող, բայց «միմյանցից որևէ այլ բնութագրական հատկանիշով տարբերվող հնչույթները» (հմմտ. p, b, m երկշրթնայինները կամ t, d, n ատամնայինները ֆրանսերենում)<sup>20</sup>: Ա. Մարտինեն **լծորդություն** է համարում «երկու զուգահեռ կարգեր և որոշակի թվով շարքեր ներառող միավորը», ընդ որում՝ այդ կարգերից ու շարքերից յուրաքանչյուրը պիտի պարունակի երկու հնչույթ: Հմմտ.

p t k  
m n ɲ<sup>21</sup>:

Իսկ «երկու կամ ավելի լծորդությունները կազմում են **փունջ**», որը կարող է բաղկացած լինել երեք շարքից: Հմմտ.

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 137:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 116-117:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 97:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 98:

P t.

b d.

m n. և այլն<sup>22</sup>:

Այս առնչությամբ ուշագրավ է, որ 1) փորձ է արվել Ա. Մարտինեին հակադարձել *բինարիզմին*<sup>23</sup> ուղղված նրա քննադատությունը<sup>24</sup>, 2) Ա. Մարտինեի հարացույցը համարվել է անկատար, որովհետև այնտեղ բացակայում են *դիրքի, հակադրության* և *չեզոքացման* երևույթները՝ որպես ՏՀ-ի հիմնական գործառնելիներ<sup>25</sup>:

Այս հարցադրումների հանգամանակից քննությունը մեր նպատակից դուրս է, սակայն դրանց շրջանցումն էլ ճիշտ չի լինի, որովհետև այդ իրողություններն ուղղակիորեն առնչվում են «Խնայողության սկզբունքի...» բուն էությանը: Ճիշտ է, որ իր տեսությունը կառուցելիս Մարտինեն նույնպես հաճախ է դիմում երկատումային մեթոդի սկզբունքներին՝ կիրառելով այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ, «կտրուկ -ոչ կտրուկ», «կոկորդայնացած-չկոկորդայնացած», «ձայնեղ-խուլ» հակադրությունները: Սակայն բինարիզմին ուղղված նրա քննադատությունը մեր ըմբռնմամբ վերաբերում է ոչ այնքան երկատումային մեթոդով վերլուծություն իրականացնելուն, որքան բինարիստների կողմից «փաստերի մանիպուլյացիային», երբ «... «հավելուրդային հատկանիշները» հմտորեն հեռացնելու ճանապարհով նրանց հաջողվում է վերջին հաշվով» դրանք «հարմարեցնել իրենց հիմնական կանխադրույթներին»<sup>26</sup>: Ըստ Ա. Մարտինեի բինարիստական տեսությունը «ավելի շուտ մտահայեցողական կառուցում է, քան նախնական դիտարկումների արդյունքները միմյանց հետ համաձայնեցնելու փորձ»<sup>27</sup>: Վերջին իրողության առնչությամբ, սակայն, չենք կարող չընդունել Վ. Զվեգինցևի քննադատությունը, ըստ որի՝ «Ա. Մարտինեի փաստարկման մեթոդին» նույնպես խորթ չէ «մտահայեցողական բնույթը»<sup>28</sup>. ոչ հազվադեպ նա ևս

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 100:

<sup>23</sup> Տե՛ս նաև Հնչոյթաբանության *բինարիստական*, այլ կերպ՝ *երկատումային* (հուն. διχοτομία «կես-կես անել, երկու մասի բաժանել» բառից) տեսությունը առաջարկեցին Ռ. Յակոբսոնը, Գ. Մ. Ֆանտը և Մ. Հալլեն նախորդ դարի 50-ական թթ.: Ավելի ուշ Ն. Չոմսկին և Մ. Հալլեն ստեղծեցին երկատումային տեսության մեկ այլ տարբերակ՝ փորձելով հաշվի առնել նախորդի մասին հնչած քննադատությունները: Առաջին աշխատության ռուսերեն թարգմանությունը տե՛ս **Якобсон Р., Фант Г. М. и Халле М.** Введение в анализ речи. Различительные признаки и их корреляты // «Новое в лингвистике», вып. II. М., 1962, էջ 173-230: Իսկ քննադատական վերլուծությունները տե՛ս **Иванов В. В.** Теория фонологических различительных признаков // նույն տեղում, էջ 139-172, **Степанов Ю. С.** Основы общего языкознания, М., 1975, էջ 68-71:

<sup>24</sup> Տե՛ս **Звегинцев В.**, նշվ. աշխ., էջ 19:

<sup>25</sup> Տե՛ս **Журавлев В. К.**, նշվ. աշխ., էջ 62-63:

<sup>26</sup> **Мартине А.**, նշվ. աշխ., էջ 103:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 102: Երկանդամ (կամ բինարիստական) տեսությունը այլ տեսանկյունից է քննադատել Յու. Ստեպանովը (տե՛ս **Степанов Ю. С.**, նշվ. աշխ., էջ 68-71):

<sup>28</sup> **Звегинцев В.**, նշվ. աշխ., էջ 19: Բնարկե, Վ. Զվեգինցևի գնահատականն ավելի խիստ է:

իր տեսակետները կառուցում է վարկածների վրա՝ առանց փաստարկման<sup>29</sup>:

Ինչ վերաբերում է «խնայողության» տեսությանն ուղղված երկրորդ քննադատությանը, ապա այն նույնպես ընդունելի է մասնակիորեն: Ճիշտ է, որ *դիրքի, հակադրության* և *չեզոքացման* հասկացությունները «Խնայողության սկզբունք»-ում հիմնական գործառեղիներ չեն, բայց ճիշտ չէ, թե այդ հասկացությունները այնտեղ ընդհանրապես բացակայում են: Նշվածներից մասնավորապես *հակադրությունը* Մարտինեի տեսության մեջ խորքային ներկայություն է, որի վկայությունն է նրա հետևյալ միտքը. «...«կարգ» և «շարք» հասկացությունները, ինչպես և ցանկացած ուրիշ հնչույթաբանական հասկացություն, **իմաստ ունեն միայն հակադրության առկայության դեպքում**»<sup>30</sup> (ընդգծ. իմն է՝ Վ. Պ.): Իսկ *կարգը* և *շարքը* «խնայողության» տեսության հիմնական գործառեղիներն են՝ *լծորդության* հետ միասին: Մարտինեի տեսության մեջ անտեսված չէ նաև *չեզոքացման* սկզբունքը<sup>31</sup>: Իսկ եթե նկատի ունենանք, որ *հակադրության, չեզոքացման* և *դիրքի* ըմբռնումները մեկը մյուսով պայմանավորված են, ապա ակնհայտ է, որ խորքային առումով *դիրքի* հասկացությունը ևս չի շրջանցվել Ա. Մարտինեի հարացույցում: Ասվածից կարելի է եզրակացնել, որ «խնայողության» տեսության մեջ առկա է սկզբունքների կրկնակի կիրառում, այն է՝ հիմնական համարվող *լծորդությունների, կարգերի, շարքերի* և *փնջերի* հասկացությունների գործառույթը կառուցվում է *հակադրության, դիրքի* և *չեզոքացման* սկզբունքների բազային գործառույթի վրա:

«Խնայողության» տեսության մեջ կիրառված սկզբունքներից է *կատալիզի* հասկացությունը: Կատալիզը բնորոշվում է որպես երկու բնութագրական արտաբերությունների խառնվելու հետևանքով երկու հնչույթների ձուլում (որը, սակայն, «չի բերում բառերի և ձևերի լուրջ շփոթի»): Գործառական տեսանկյունից զուգահեռություն տեսնելով կատալիզի և «դատարկ վանդակի» երևույթների միջև՝ Ա. Մարտինեն կասկած է հայտնում, թե հ.-ե. լեզվի հնագույն փուլերում «գոյություն է ունեցել հնչույթ, որը սովորաբար վերականգնվում է որպես \*b»<sup>32</sup>: Այդպիսի ենթադրության համար հիմք է եղել կելտական ճյուղի բրիտական և գոյդելյան (իմա՝ գաելյան) ենթախմբերի լեզուներում \*g<sup>w</sup>>\*b հնչյունափոխությունը (հմատ. հ.-ե. \*g<sup>w</sup>ou->հն իռլնդ. bo «կով»): Քանի որ \*b-ն վերականգնվում է \*d, \*g, \*g<sup>w</sup> կարգի և \*p, \*bh շարքի հատման կետում, Ա. Մարտինեն ենթադրում է երկու հնարավոր լու-

<sup>29</sup> Sté u, op., Мартине А., նշվ. աշխ., էջ 210-211:

<sup>30</sup> Мартине А., նշվ. աշխ., էջ 97:

<sup>31</sup> Sté u նույն տեղը, էջ 100-101:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 123: Այս առնչությամբ առաջիններից մեկը կասկած էր հայտնել Հ. Պեդերսընը 1951-ին հրապարակած աշխատության մեջ (տե՛ս նույն տեղը):

ծում. կա՛մ \*b-ի տեղում եղել է դատարկ վանդակ, որը լրացվել է փոխառության ճանապարհով, կա՛մ էլ տեղի է ունեցել կատալիզ, այն է՝ \*b-ի և \*g<sup>w</sup>-ի ձուլում մեկ հնչույթի մեջ: Երկրորդ տեսակետի համար հիմք է տալիս նշված ենթախմբերի կելտական լեզուներում շրթնահետնաքմայինների վերանալը. հետևաբար [\*g<sup>w</sup>]-ի բարդ արտաբերությունից անցումը [\*b]-ի պարզ արտաբերության պիտի համարել խնայողություն<sup>33</sup>:

Ի տարբերություն այն կառուցվածքաբանների (մասնավորապես՝ Լ. Բլումֆիլդի և իր աշակերտների), որոնք երիտքերականների նման լեզվաբանության խնդիրը սահմանափակում էին լեզվական փաստերի նկարագրությամբ՝ հայտարարելով, թե դրանք բացատրելու յուրաքանչյուր փորձ «անխուսափելիորեն դատապարտված է անհաջողության» (ուստի ոչ պատահականորեն Մարտինեն Բլումֆիլդին՝ ամերիկյան դեակրիպտիկ լեզվաբանության կնքահորը, համարում է երիտքերականների հետևորդը)<sup>34</sup>, Ա. Մարտինեն SZ-ի առաջնահերթ խնդիրն է համարում բացատրել, թե «ինչու» են տեղի ունեցել այդ փոփոխությունները: Ի պատասխան այս առնչությամբ Վ. Չվեգինցևի դիտարկման, որը կարծես Ա. Մարտինենին ուղղված հանդիմանություն է, պիտի նկատել, որ «ինչու»-ի պատասխանը, այսինքն՝ «խնայողության սկզբունքի» յուրաքանչյուր վերլուծություն, որոշ չափով ներառում է նաև «ինչպես»-ը<sup>35</sup>:

Տարածամանակյա հնչյունական փոփոխությունները փորձելով բացատրել լեզվին ի բնե հատուկ «խնայողության սկզբունքի» միտումով, այնուամենայնիվ Ա. Մարտինեն ոչ միայն հակված չէ իր մատնանշած օրինաչափությունները համարելու նոր «հնչյունական օրենք» կամ լեզվական ընդհանրույթ (ունիվերսալիա), այլև առհասարակ դեմ է արտահայտվում այդպիսի բացարձակ օրինաչափություններ սահմանելուն<sup>36</sup>: Իր ձևակերպմամբ՝ ինքը փորձել է «ցույց տալ միայն այն շրջանակները, որոնց ներսում ամեն ոք կարող է կազմակերպել իր սեփական փորձի տվյալները»<sup>37</sup>: Ավելին, նա համոզված է, որ «տարածամանակության մեջ հնարավոր չէ քանդել պատճառայնության կծիկի բոլոր թելերը թեկուզև այն պատճառով, որ պատճառայնությունը

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 123-124:

<sup>34</sup> Հմմտ. «...բոլոր «կառուցվածքաբաններից» Բլումֆիլդի հետևորդները ամենաքիչն են հակված և ամենաքիչն են ընդունակ անցնելու լատ. *ū = ֆրնս. ū* տիպի արտածամանակային հավասարումների փուլը» (նույն տեղում, էջ 31):

<sup>35</sup> Հմմտ. **Мартине А.**, նշվ. աշխ., էջ 131-132, 151-153, 171, 176-178 և այլն:

<sup>36</sup> Հմմտ. «...Իրականում այդ, այսպես կոչված, համընդհանուր օրենքները հիմնված են ապրիորի դատողությունների վրա, որոնք ամրապնդված են որոշակի թվով լեզվաբանական կառուցվածքների վերլուծությամբ: Դրա պատճառով նրանք ցանկացած պահի կարող են արժեզրկվել այնպիսի լեզուների բացահայտումով, որտեղ համագոյակցում են հատկանիշներ, որոնք նախապես հայտարարվել էին անհամատեղելի» (տե՛ս **Мартине А.**, նույն տեղում, էջ 194):

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 198:

չունի ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ»<sup>38</sup>: Ա. Մարտինեն իր տեսությունը համարում է «իրատեսական վարկածների հանրագումար», որում որոշակի փոփոխությունների համար տրված բացատրությունների մեջ իրենց տեղը կգտնեն բոլոր փաստերը: Այդ տեսությունը «իրենից ավարտուն ոչինչ չի ներկայացնում»: Տարածամանակյա տեսությունը «ենթադրում է քննարկում և համագործակցություն»<sup>39</sup>: Ըստ այդմ՝ Ա. Մարտինեն փակ տեսական համակարգ կառուցելու նպատակ չի հետապնդում, այլ միայն փորձում է մատնանշել ուղիներ, որոնցով կարելի է իրականացնել նյութի քննությունը: Բայց հենց միայն հնչյունական փոփոխությունների ընդհանուր միտումներ ցույց տալու փորձն արդեն իսկ հանգեցնում է որոշակի օրինաչափությունների հաստատման, հետևաբար եթե ոչ հնչյունական օրենքների, ապա առնվազն լեզվական վիճակագրական ընդհանրությունների հաստատման<sup>40</sup>: Եվ դա ոչ միայն բնական է, այլև օրինաչափ է: «Հնչյունական օրենքների» և ընդհանրությունների նկատմամբ վերապահ վերաբերմունքը, ըստ երևույթին, բացատրվում է այդ շրջանում «հնչյունական օրենքի» երիտքերականական (իմա՝ բացառություններ չճանաչող) ըմբռնման առնչությամբ հատկապես կառուցվածքաբանների (և ոչ միայն) շրջանակներում ձևավորված ընդհանուր քննադատական տրամադրությամբ:

«Խնայողության» տեսության նախօրինակը Ջ. Ցիպֆի «նվազագույն ճիգի» օրենքն է, սակայն այդ տեսությունից Ա. Մարտինեն փոխառել է միայն հիմնական գաղափարը: Ջ. Ցիպֆը հակադարձ հարաբերության կապ է ենթադրել «հնչյունների բարդության և խոսքային հոսքընթացում նրանց հաճախականության միջև»<sup>41</sup>: Ըստ էության, չմերժելով Ցիպֆի տեսության հիմնական գաղափարը (հմմտ. «Դժվար է պատկերացնել, որ շատ հաճախ հանդիպող հնչյույթը կարող է մնալ շատ բարդ»<sup>42</sup>)՝ Ա. Մարտինեն նկատում է, որ նրա տեսությունը որոշակի լեզվական հիմնահարցերի նկատմամբ կիրառելիս ոչ միշտ է համոզիչ: Այս կամ այն տեսակետը արտահայտելիս նա ոչ միշտ է հաշվի առել բոլոր տվյալները: Օր.՝ գերմանական բաղաձայնների տեղաշարժի հնարավոր պատճառներից մեկը «ձայնավորների զանգվածային անկման և վերջավորությունների ընկնելու հետ կապված՝ հպական բաղաձայնների հաճախականության զգալի մեծացումը» համարելը, ըստ Ա. Մարտինեի, հակասում է այդ երևույթների իրական ժամանակագրության մասին հայտնի տվյալներին<sup>43</sup>: Եթե մի կողմից՝ հնչյույթի բարդությունը կարող է կանխորոշել նրա քիչ հանդիպելիությունը, մյուս

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>40</sup> Հմմտ. «... Ա. Մարտինեն իր խնայողության տեսությունը հակված է դիտելու հատկապես որպես ընդհանրությային» (Звегинцев В., նշվ. աշխ., էջ 20):

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղը, էջեր 173:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 174:

<sup>43</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 174-175:



կողմից՝ նույնքան մեծ է նրա տարբերակիչ նշանակությունը, և մեծ է հավանականությունը, որ այն կարտաբերվի ավելի հստակ: Մանսկրիտը, ինչպես և առհասարակ հնդիրանական լեզուները, որոնք պահպանել են շնչեղ ձայնեղների շարքը, վկայում են, որ «հնչյունաբանական կամ հնչյութաբանական բարդությունը լիովին կարող է .... գուգակցվել մեծ հաճախականության հետ չխախտելով հավասարակշռությունը և չառաջացնելով կտրուկ փոփոխություններ»<sup>44</sup>: Ա. Մարտինեի կարծիքով, Յիպֆի հիմնական սխալը հնչյութների (հնչյունների) բարդության մասին խոսելն է, այնինչ «հարկ էր խոսել արտաբերության ինտենսիվության և հստակության տարբեր աստիճանների մասին»<sup>45</sup>:

«Առոգաբանություն» գլխում Ա. Մարտինեն անդրադարձել է վերհատույթային հնչյութաբանական իրողություններին, ինչպիսիք են՝ *շեշտը, տոնը, հնչերանգը*, մասամբ՝ *քանակը*<sup>46</sup>: Դժվար է ասել, որ այս գլխում ևս նրա քննությանը բնորոշ է տարածամանակյա հայեցակերպը (այս հարցում Վ. Չվեգինցևի դիտողությունը հիմքեր ունի), բայց այն չի կարող նաև համաժամանակյա համարվել (ինչպես որ կարծում է Վ. Չվեգինցևը)<sup>47</sup>: Ավելի շուտ այն քննություն է ապաժամանակյա հայեցակերպով, որը, սակայն, ունի թե՛ տարածամանակության և թե՛ համաժամանակության բաղադրիչներ:

Վերհատույթային իրողություններից հեղինակին ամենից շատ զբաղեցրել է շեշտը: Ուշագրավ է, որ նա մերժում է ուժային շեշտի որպես «կոյր ուժի» մասին տարածված կարծիքը, ըստ որի՝ այն «անխնայ ոչնչացնում է ձևաբանական և բառային տարբերությունները»: Չընդունելով այդ տեսակետի բացարձակությունը՝ Ա. Մարտինեն նկատում է, որ ուժային շեշտի ներգործությամբ լեզվում առաջ եկող փոփոխությունները ոչ միշտ են հանգեցնում լեզվի գործառույթներն իրականացնելու անհնարինության: Բացի դրանից, օր., բառի վերջավորությունների թուլանալու և ընկնելու պատճառ կարող է լինել ոչ միայն շեշտի տեղաշարժը կամ շեշտագուրկ (=թույլ) դիրքը, որին սովորաբար վերագրում են այդ կարգի երևույթները<sup>48</sup>, այլև «ընդհանուր բառային-ձևաբանական

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 179-180:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 180

<sup>46</sup> Ուշագրավ է, որ Ա. Մարտինեն *առոգաբանությունը* (ֆրնս. prosodie) *հնչաբանության* (ֆրնս. phonématique/phonémique) հետ միասին համարում է հնչյութաբանության (ֆրնս. phonologie) երկու բաժինները՝ հնչաբանությանը հատկացնելով հնչյութի ուսումնասիրությունը: Նա իրավացիորեն խուսափում է ամերիկյան դեակրիպտիկ լեզվաբանության մեջ առոգանական երևույթներին տրված «վերհատույթային հնչյութ» տերմինային բնորոշումից, սակայն, մեր կարծիքով, «հատույթային» և «վերհատույթային» տերմինների գործածությունից առհասարակ խուսափելը սուրբյեկտիվ մոտեցման արդյունք է և չի կարող արդարացված համարվել (տե՛ս **Мартинс А.**, նշվ. աշխ., էջ 199):

<sup>47</sup> Տե՛ս **Звегинцев В.**, նշվ. աշխ., էջ 22-23:

<sup>48</sup> Հին հայերենում հ.-ե. լեզվի համեմատությամբ ծագումնաբանորեն նույնական բառերի մեկ վանկով ավելի կարճ ձևերի առկայությունը Ա. Մեյեն բացատրել է նախագրաբարյան հայերենի վերջնիթեր շեշտով, այսինքն՝ վերջին վանկի ձայնավորի համար թույլ դիրքով, որի պատճառով վերջնային ձայնավորն ընկել է: Հմմտ. սնակ. páñca,

բարեշրջումը», որը տեղի է ունեցել, օր., արևմտյան բոլոր հնդեվրոպական լեզուներում, կամ «բարբառների միջև փոխազդեցության հնարավորությունը» (հմմտ. \*hortos> օսկ.-ուլբ. húrз «այգի», ի տարբերություն լատիներենի, ուր նման փոփոխություն տեղի չի ունեցել. հմմտ. hortus): Ըստ ամենայնի բանաձևի արժեք ունի այն տեսակետը, որ ձայնավորների թուլացումը ոչ միշտ է պայմանավորված ուժեղ շեշտով, «և որ որոշակի վանկերի հատուկ հստակությունը» կարող է բացատրվել «ուրիշ վանկերում տարբերությունների հստակության նվազեցման միտումով»<sup>49</sup>:

«Խնայողության սկզբունք...»-ում տեղ են գտել նաև զուտ տեսական բնույթի դատողություններ լեզվական/լեզվաբանական որոշ իրականությունների վերաբերյալ, որոնք կա մ այդ աշխատության գործառնելիներ են, կա մ էլ դրանց բնութագրերով ամբողջանում է Ա. Մարտինեի լեզվաբանական հայեցակարգը: Պիտի առանձնացնել հատկապես *լեզվաբանության, հնչույթի, ենթաշերտի* (սուբստրատի) տեսության մասին նրա պատկերացումները: Ըստ այդմ.

1) Լեզվաբանությունը «կառուցվածքային-գործառական» գիտություն է<sup>50</sup>, որի նկատմամբ պատմական հայեցակետի կիրառումով կձևավորվի «կառուցվածքային-պատմական» լեզվաբանությունը:

2) Հնչույթի տարբերակման համար նախընտրելի է տարբերակիչ արժեքայնության չափորոշիչը՝ որպես «զուտ լեզվաբանական ձևային չափորոշիչ»<sup>51</sup>: Միաժամանակ, ըստ Ա. Մարտինեի, «հնչույթը՝ որպես հնչույթաբանական նկարագրության գործառական հասկացություն, համընկնում է հոգեբնախոսական որոշակի իրողության հետ»<sup>52</sup>: Հայտնի է, որ Ա. Մարտինեն հարել է *Պրահայի (գործառական) հնչույթաբանական դպրոցին* լինելով նրա ներկայացուցիչը Ֆրանսիայում: Մակայն ինչպես պրահացիներից շատերի, այնպես էլ Ա. Մարտինեի հնչույթաբանական պատկերացումները, ընդհանուր լինելով կառուցվածքային-գործառական հիմքով, միմյանցից տարբերվել են այլ բնութագրերով<sup>53</sup>: Այսպես, եթե պրահացիների «Նախագծում» և մասնավորապես՝ Ն. Տրուբեցկոյի «Հնչույթաբանության հիմունքներ»-ում հնչույթի բնորոշման մեջ բացակայում են ֆիզիկական բնութագրերը<sup>54</sup>, ապա Ա. Մար-

հուն. πέντε, հյ. hing «հինգ» (տե՛ս **A. Meillet**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 19):

<sup>49</sup> **Мартин А.**, նշվ. աշխ., էջ 221:

<sup>50</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 34:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>53</sup> Հմմտ. **Վարդան Պետրոսյան**, Հնչույթի բնորոշումն ըստ Պրահայի գործառական հնչույթաբանության //Արդի բանասիրության հիմնասխնդիրները (միջազգային գիտա-ժողովի կուրթերի ժողովածու), Եր., 2015, էջ 223-232:

<sup>54</sup> Հմմտ. «Հնչույթաբանական միավոր, որը չի բաժանվում ավելի պարզ և ավելի փոքր հնչույթաբանական միավորների» (**Ваксак И.** Лингвистический словарь пражской школы. М., 1964, с. 230-231): «Հնչույթաբանական միավորները, որոնք տվյալ լեզվի տեսանկյունից հնարավոր չէ բաժանել ավելի փոքր, մեկը մյուսին հաջորդող հնչույթաբա-

տինեի հայեցակարգում հնչույթը զուրկ չէ այդպիսի բնութագրից (հմմտ. «... կարելի է ենթադրել, որ հնչույթը իրենից ներկայացնում է նյարդաակնային միավոր, որի ցանկացած իրացում որևէ բնույթի համատեքստում բացարձակ միատեսակ նյարդային համատեքստի արդյունք է»<sup>55</sup>): Այսինքն՝ հնչույթը դիտարկվում է հնչաշղթայում իր գործառույթի տեսանկյունից: Իհարկե պիտի նկատի ունենալ, որ այստեղ հնչույթի տեսության հարցերը դիտարկվում են տարածամասնակային գործընթացների առնչությամբ և համակցային հարաբերություններում, մի հանգամանք, որը որոշակիորեն ուղղորդում է հնչույթային բնութագրի դիտարկումը<sup>56</sup>: Այդ առումով հնչույթի հասկացությունը, ըստ Ա. Մարտինեի, շփման ընդհանուր եզրեր ունի հնչույթի՝ «Թեզիսներ»-ում տեղ գտած ըմբռնման հետ<sup>57</sup>:

3) Ենթաշերտի (լայն առումով, այն է՝ ներառյալ մակաշերտի և առշերտի հասկացությունները) տեսության նկատմամբ Ա. Մարտինեի վերաբերմունքը, մեղմ ասած, դրական չէ: Այդ տեսությունը նա բնորոշում է որպես «լեզվաբանական պրակտիկայում պատճառային բացատրություններ մտցնելու երկչոտ, նույնիսկ կարելի է ասել, մինչգիտական փորձ»<sup>58</sup>: Մարտինեի ոչ բարյացակամ վերաբերմունքի պատճառը, սակայն, ոչ այնքան բուն տեսությունն է, որքան այդ տեսությունը որպես լեզվաբանական հիմնահարցերի բացատրությունից խուսափելու վահան օգտագործելու միտումը, որ դրսևորվել է իր ժամանակին: Ենթաշերտի տեսության խոցելի կողմը Ա. Մարտինեն համարում է «նրա սխեմատիկությունը, որն ավելի շուտ քողարկում, քան ի հայտ է բերում սոցիալական-լեզվական իրավիճակների իրական բազմազանությունը»<sup>59</sup>:

Այսպիսով. 1) Ա. Մարտինեի «խնայողության տեսության» մեջ հնչյունական փոփոխությունները դիտարկվում են իբրև համակարգային տեղաշարժերով պայմանավորված իրողություններ, որոնք միտված են հանրության համար ապահովելու լավագույն հնչույթաբանական համակարգը լեզվի զարգացման տվյալ փուլում. 2) «Խնայողության տեսության» մեջ, որպես հնչույթաբանական տեղաշարժերի համակարգային գործառելիներ, կարևորվել են, մասնավորապես, *կարգի, շարքի* և *լծորդության* հասկացությունները, սակայն խորքային պլանում առկա են նաև *դիրքի, հակադրության* և *չեզոքության* երևույթները. այս

նական միավորների, մենք անվանում ենք հնչույթներ» (Трубецкой Н. С. Основы фонологии. М., 1960, с. 42):

<sup>55</sup> Мартине А., նշվ. աշխ., էջ 231:

<sup>56</sup> Հնչույթի տեսության հարցերում, ըստ ամենայնի, պիտի հիմք ընդունել Ա. Մարտինեի «Ընդհանուր լեզվաբանության հիմունքներում» տեղ գտած պատկերացումները (հմմտ. Мартине А. Основы общей лингвистики // «Новое в лингвистике», вып. III. М., 1963, էջ 408-451):

<sup>57</sup> См. и «Пражский лингвистический кружок». М., 1966, էջ 21:

<sup>58</sup> Мартине А., նշվ. աշխ., էջ 250:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 250-251:

հանգամանքը վկայում է այն մասին, որ ՏՀ-ի մեջ ևս Ա. Մարտինեն մնում է հնչյութաբանության գործառական պատկերացումների կրողը։ 3) չնայած տեսական բաց համակարգ կառուցելու իր ձգտումին և «հնչունական օրենքների» ու լեզվական ընդհանրությունների նկատմամբ ոչ նպաստավոր կարծիքին՝ Ա. Մարտինեի «Խնայողության սկզբունքը...» ևս գերծ չէ օրինաչափություններ սահմանելու միտումից, որը բնական պիտի համարել հնչյունական փոփոխությունները բացառապես համակարգային տեղաշարժերով պայմանավորող տեսության համար։ 4) որոշ տեսական դրություններ մտահայեցողական լինելով հանդերձ՝ Ա. Մարտինեի գիրքը ծանրակշիռ ներդրում է ՏՀ-ի ձևավորման ճանապարհին։

**Բանալի բառեր** – *տարածամասնակյա հնչյութաբանություն, կարգ, «նվազագույն ճիգ» օրենք, «խնայողության սկզբունք», շարք, լծորություն, հակադրություն*

**ВАРДАН ПЕТРОСЯН – «Принцип экономии» и вопросы диахронической фонологии.** – Книга французского языковеда Андре Мартине «Принцип экономии в фонетических изменениях» – один из фундаментальных трудов в области диахронической фонологии. Её концепция такова: фонетические/фонологические изменения, происходящие в языке, обусловлены инерцией коммуникации во время речевой деятельности и сопротивлением со стороны анатомических органов. Это явление Дж. Ципф определил как закон «минимального усилия». Хотя, согласно концепции Мартине, основные функтивы фонетических изменений (серии, ряды, корреляции) относятся к парадигме (системе), однако их функция реализуется в речевом потоке. Следовательно, неверно утверждать, что «теория экономии» Мартине построена исключительно с учётом системных данных. Пусть учёный предвзято относился к «фонетическому закону» и к абстрактным языковым понятиям и пытался построить открытую теоретическую систему, которая будет учитывать не только известные факты, но и оставит место для новых открытий, его система также не лишена склонности к обобщению, что можно считать естественным. При этом «Теории экономии» не чужда некоторая умозрительность.

**Ключевые слова:** *диахроническая фонология, «принцип экономии», закон «минимального усилия», серия, ряд, корреляция, оппозиция*

**VARDAN PETROSYAN – “The Principle of Economy” and the Issues of Diachronic Phonemics.** – A. Martine’s Book “The Principle of Economy in the Phonetic Changes” is one of the fundamental works of diachronic phonemics. According to “The Principle of Economy in the Phonetic Changes” the phonetic/phonemic changes occurring in the language are conditioned by the communication momentum in the process of speaking and the resistance of human anatomy organs to them. This is a phenomenon, which J. Tsipf had formulated as a law of “minimal effort”. Although in A. Martine’s concept the main functives (series, row, correlation) refer to the paradigm (system), but

their function becomes a reality in the flow of speech (syntagm). Accordingly, it is not correct to claim that A. Martine's "theory of economy" is constructed exceptionally with the counting of systematic data. Although he has treated the notions of "phonetic laws" and linguistic similarities with stipulation and tried to build an open theoretical system which will take into consideration not only the famous facts, but also will leave room for observations, his system is also not devoid of the trend of universality which should be considered quite natural. Being very well-structured "The Theory of Economy" is, however, not devoid of some contemplation of mind.

**Key words** – *Diachronic Phonemics, "the Principle of Economy", a law of "minimal effort", series, row, correlation, opposition*